4-րդ դասարանի «Մայրենի» առարկայից գիտելիքների ստուգման (թելադրություն)
ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թելադրության անցկացմանը հատկացվում է 60 րոպե: Թելադրության տեքստը պետք է պարունակի 65-75 բառ:

Տեքստը 1 անգամ ընթերցվում է ուսուցչի կողմից, ապա թելադրվում աշակերտներին: Թելադրությունն ավարտելուց հետո ուսուցիչը ևս մեկ անգամ ընթերցում է տեքստը:

Թելադրության գնահատման չափանիշները

Թելադրության համար տրվելիք առավելագույն միավորը 10 է:

Թելադրությունը գնահատվում է առավելագույնը 10 միավորով առանց ուղղագրական և կետադրական սխալների, առանց ուղղումների և ջնջումների գրելու համար:

Յուրաքանչյուր ուղղագրական սխալի դեպքում հանվում է 1-ական միավոր:

Առանց կետադրական սխալների, բայց 7 և ավելի ուղղագրական սխալի դեպքում աշակերտը գնահատվում է անբավարար:

1-2 կետադրական սխալի դեպքում հանվում է 1 միավոր: Մեկական միավորներ են հանվում նաև 3-4, 5-6 կետադրական սխալների համար: 7 և ավելի կետադրական սխալի դեպքում հանվում է 4 միավոր:

1-4 ջնջում կամ ուղղում ունենալու դեպքում հանվում է 1 միավոր, 4-ից ավելի յուրաքանչյուր ուղղման կամ ջնջման համար հանվում է մեկական միավոր:

Յուցում.

Տեքստում ուղղակի խոսքի առկայության դեպքում ուսուցիչը թելադրության պահին դրա կետադրությունը պետք է ներկայացնի աշակերտներին, քանի որ ուղղակի խոսքի կետադրության կանոնները 1-4-րդ դասարաններում չեն ուսումնասիրվում որպես առանձին դասանյութ:

Գրավոր աշխատանքում դրանց խախտման դեպքերի համար աշակերտից միավորներ չեն հանվում:

Թելադրության տեքստի նմուշ

Իմ այգում մի խնձորենի կա, որը երբեք չի ծաղկել: Նա մտածեց մի ամբողջ ձմեռ, մի ամբողջ ամառ, մի ամբողջ գարուն և վերջապես զարդարվեց ճերմակ-ճերմակ ծաղիկներով և ունեցավ չորս խնձոր:

Առաջին խնձորը բազմել էր ծառի ամենաբարձր ճյուղին: Նա ամենագեղեցիկն էր: Ամբողջ օրը արևի շողերը գուրգուրում էին նրան, թշիկները համբուրում, դրա համար էլ օր օրի կարմրում էր, պսպղում: Նա շատ հպարտանում էր իր գեղեցկությամբ, շարունակ շուռումուռ էր գալիս, որպեսզի լավ կարմրի: Նրա անունը Հուրի էր:

72 բառ